



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԲՈՂ
ՔԻԼԻՏԾՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԲՕԼ ՔԻԼԻՏԾԵԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԳԱՀԻՐԷ

Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, յոյժ երջանիկ ենք, որ մեր ազգի վա-
ականերու մէջ կը գտնուին ազնուահոգի անձնատրութիւններ, որոնք իրենց
բարոյական և նիւթական օժանդակութիւնը կը նուիրաբերեն, որպէսզի առա-
ւել շէն ու պայծառ դառնան սփիւռքի մեր եկեղեցական ու ազգային հաստա-
տութիւնները:

Դուք, յարգարժան Տիար, իբրև հարազատ վաւակը մեր հաւատաւոր ազ-
գին, բազում տարիներէ ի վեր անձնուիրաբար գործոն կերպով կը մասնակ-
ցիք տեղւոյդ եկեղեցոյ կեանքի յառաջընթացքին որպէս թեմական ժողովի
ատենապետ, մեծ յարգանք վայելելով Ձեր գաղութին մէջ անխտիր բոլորին
կողմէ:

Մեզ քաջ յայտնի է նաև, որ իբրև կրթաւեր անձնատրութիւն, նիւթական
մեծագումար միջոցներով սքանչելի գործ կատարած էք հաստատելով Հրա-
տարակչական հիմնադրամ մը, այն յանձնելով Ազգային Իշխանության մատա-
կարարման:

Մենք սրտանց կը գնահատենք Ձեր բազում տարիներու ազգաշէն վապ-

տակը և ընդառաջելով Եգիպտահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Չաւէն արքեպիսկոպոս Չինչինեանի միջնորդութեան, այսու Հայրապետական Մեր կոնդակով Ձեզի կը յղենք Մեր օրհնութիւնը և կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» Ա կարգի շքանշանը, մաղթելով, որ զայն կրէք Ձեր ականի կուրծքին վրայ արդար հպարտութեամբ բազում երկար տարիներ, քաջառողջութեամբ և ընտանեական երջանկութեամբ:

«Ողջ լըրութեամբ կօրացեալ Սուրբ Հոգւով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

Կարգի

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 17 մայիսի
1982 Փրկչական ամի,
եւ ի տոմարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1129

